Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի ելույթը Անտոն Քոչինյանի 100-ամյակի առթիվ Վանաձորում կազմակերպված հոբելյանական միջոցառմանը

22.10.2013թ.

Սրբազան հայր,

Թանկագին հյուրեր, սիրելի լոռեցիներ:

Յուրաքանչյուր տարելից, մանավանդ 100-ամյա հոբելյանը, իր մեջ ներառում է հիշարժան այնպիսի իրադարձություններ, որոնք հասարակության կյանքում ունեցած իրենց դերով վառ են պահում տվյալ անհատի կերպարը:

Այդ տեսակետից Անտոն Երվանդի Քոչինյանը, որպես պետական և քաղաքական գործիչ, Խորհրդային Հայաստանի պատմությունից մեզ է հառնում որպես տնտեսական հզորացման և երկրի զարգացման երախտավոր հայրենասերի կերպար:

Նրա կառավարման տարիների ծնունդն էին Հայաստանի արդյունաբերական հսկաներից Ալավերդու լեռնաքիմիական և Կիրովականի քիմիական գործարանները: Կառուցվեցին արդյունաբերական հզոր կենտրոններ Հրազդանը, Չարենցավանը, արդյունաբերական գործարաններով զինվեցին ու կառուցապատվեցին Սևանը, Դիլիջանը: Կառուցվեցին Երևան-Սևան-Շորժա-Զոդ, Մասիս-Նուռնուս, Իջևան-Հրազդան երկաթուղիները:

Նրա նախաձեռնությամբ կառուցվեցին նաև Սարդարապատի հուշահամալիրը, «Էրեբունի» թանգարանը, շատ ու շատ մշակութային օջախներ, ուսումնական հաստատություններ: Նշվեց Երևանի հիմնադրման 2750-ամյակը: Նրա օրոք կառուցվեցին Գառնու ջրատարը, Ապարանի ջրամբարը, հազարավոր հեկտարներով այգիներ գցվեցին: Կառուցվեցին Երևան-Սևան մայրուղին, «Հրազդան» մարզադաշտը, «Ռոսիա» կինոթատրոնը, Մխչյանի պոմպակայանը, Կապան-Գորիս ավտոճանապարհը, Երևանի, Կիրովականի, Հրազդանի ջերմաէլեկտրակայանները, Որոտանի հիդրոկասկադը, Տաթևի

հիդրոէլեկտրակայանը: 1973 թ. նա նախաձեռնեց «Զվարթնոց» օդանավակայանի ընդարձակման աշխատանքները: 1963 թ. նրա անմիջական նախաձեռնությամբ սկսվեց Արփա-Սևան 48-կիլոմետրանոց ջրատար թունելի կառուցումը:

1965 թվականը հայ ազգային զարթոնքի տարի էր: Երևանում հայ ժողովուրդը ոտքի կանգնեց՝ ոգեկոչելու Ցեղասպանության զոհերի հիշատակը: Այդ օրերին պատասխանատու դիրքորոշում ընդունեցին երկրի ղեկավարները՝ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յակով Զարուբյանը և Նախարարների խորհրդի նախագահ Անտոն Քոչինյանը՝ կանգնելով ժողովրդի կողքին: Հայաստանի ղեկավարությունն անգամ համարձակություն ունեցավ Կրեմլի առջև հարց բարձրացնելու Ցեղասպանության զոհերի հուշարձան-կոթող կառուցելու մասին: Անձամբ Անտոն Քոչինյանի ջանքերով առկա մի քանի տարբերակներից ընտրվեց հենց ներկայիս տարբերակը, որը նախապես հանված էր քննարկումից:

1966 թ. նա համարձակություն ունեցավ Կրեմլում բարձրացնելու Արցախը մայր հայրենիքին միավորելու հարցը: Եվ պատահական չէ, որ մինչև պաշտոնավարման վերջը Անտոն Քոչինյանը Կրեմլի ղեկավարության աչքում մնաց որպես նացիոնալիստ գործիչ:

Ահա այս և բազմաթիվ այլ իրողություններ հիմք են տալիս մեզ այսօր ասելու, որ Անտոն Քոչինյանը մեկն էր այն հայրենասեր ղեկավարներից, ով, խորապես գիտակցեց իր տեղն ու դերը հարազատ ժողովրդի և իր ազգի շահերի պաշտպանության դիրքերում: Նա մեկն էր այն հազվագյուտ ղեկավարներից, ովքեր բազմիցս վտանգելով իրենց կարիերան ու հեղինակությունը կարողանում էին Կրեմլում լուծել այնպիսի հարցեր, որոնք կենսականորեն անհրաժեշտ էին հայ ժողովրդի ազգային ինքնությունը, դարավոր մշակույթը պահպանելու և ապագայում իր տեսլականներն իրականացնելու համար: